

Որ ծառայություններն են անվճար հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների համար

Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բժշկական օգնության և սպասարկման ողջ ծավալը, ներառյալ՝ ըստ բժշկական ցուցումների տեղամասային բժշկի ուղեգրմամբ նեղ մասնագիտական խորհրդատվությունները (այդ թվում ակնաբույժի, քիթ-կոկորդ-ականջաբանի, սրտաբանի, նյարդաբանի, վիրաբույժի) և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններն իրականացվում են անվճար՝ ամբողջ բնակչության համար, այդ թվում տարեցների՝ անկախ սոցիալական կարգավիճակից:

1-ին, 2-րդ և 3-րդ հաշմանդամության խումբ ունեցող անձինք ընդգրկված են սոցիալապես անապահով և հատուկ խմբերի ցանկում և կարող են օգտվել սահմանված արտոնություններից, մասնավորապես.

Ø **Հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում.** վիրահատական և թերապևտիկ բուժում, այդ թվում՝ նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող հետևյալ բժշկական ծառայությունները (**բացառությամբ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց**).

- 1) գլխուղեղի անոթային հիվանդությունների էնդովասկուլյար բուժում (ներառյալ միկրոկաթետերի, միկրոպարույրի և օնիքսի արժեքը)
- 2) կլիպսների օգտագործումը՝ նյարդավիրաբուժական վիրահատությունների ժամանակ
- 3) շունտավորող համակարգերի օգտագործումը՝ նյարդավիրաբուժական վիրահատությունների ժամանակ
- 4) էնդովասկուլյար ռեկոնստրուկտիվ բուժում՝ նյարդավիրաբուժական հիվանդությունների ժամանակ
- 5) սրտի բաց վիրահատություն, կորոնար անոթների բալունային դիլատացիա, կորոնար անոթների ստենտավորում՝ ինչպես դեղապատ, այնպես էլ՝ ոչ դեղապատ ստենտներով, սրտի փականների պրոթեզավորում, սրտի ռիթմը վարող սարքերի իմպլանտացիա
- 6) աորտայի անևրիզմաների պատռվածքների և (կամ) շերտազատումների վիրահատություններ.
- 7) կարդիովերտեր-դեֆիբրիլատորի իմպլանտացիա
- 8) սրտի կաթետերային արևացիա
- 9) խոշոր և պերիֆերիկ անոթների բալունային դիլատացիա և ստենտավորում
- 10) սիներակի (Վ. Կավա/V. Cava) ֆիլտրի տեղադրումը (ներառյալ ֆիլտրի արժեքը)
- 11) արթրոսկոպիկ վիրահատություններ
- 12) բացառապես վնասվածքաբանական վիրահատությունների ժամանակ կիրառվող մետաղական կոնստրուկցիաների, ընդ որում, միայն հարթակների, պտուտակների և շյուղերի արժեքները

13) շագանակագեղձի միջմիզուկային մասնահատում (SՈՒՌ, TYP)՝ բիպոլյար կամ լազերային եղանակով

14) քարափշրում (լիթոտրիպսիա)՝ հեռահար, պերկուտան, ուրեթերոռենոսկոպիկ

15) սկլերոպլաստիկա, կեռատոպլաստիկա

16) աչքի առաջային խցիկի արհեստական փականների կիրառում (շունտավորում):

Ø **Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ.** 1-ին, 2-րդ և 3-րդ խմբի հաշմանադմություն ունեցող անձինք իրավունք ունեն օգտվելու պետական պատվերի շրջանակներում իրականացվող դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների տրամադրման ծառայություններից՝ ըստ բժշկական ցուցումների:

Ø **Արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում.**

1) ընդլայնվել է բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի և հիվանդությունների ցանկը, որում ընդգրկված շահառուներին դեղերը հատկացվում են դրանց արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ: Մասնավորապես, պահպանվել է 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց և հաշմանդամություն ունեցող երեխաներին (մինչև 18 տարեկան) տրվող արտոնությունը՝ դեղերը դրանց արժեքի լրիվ փոխհատուցմամբ, իսկ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց՝ 50 տոկոս զեղչով տրամադրելու վերաբերյալ:

Ø **Ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում.**

1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունեն օգտվելու պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններից, այդ թվում՝ թերապևտիկ և օրթոպեդիկ ստոմատոլոգիական բժշկական օգնությունից ու սպասարկումից, իսկ 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք՝ արտոնյալ պայմաններով՝ համավճարի սկզբունքով (բացառությամբ ատամի հեռացումը):

Ամբողջությամբ անվճար՝ պետական պատվերի շրջանակներում ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում կարող են ստանալ 65 և ավելի բարձր տարիքի անձինք, եթե վերջիններս ընդգրկված են ընտանեկան նպաստի համակարգում՝ 30.0, ինչպես նաև ավելի բարձր ապահովության միավոր ունեցողները: Եթե 65 և ավելի բարձր տարիքի անձն ընդգրկված չէ վերոհիշյալ համակարգում, ապա անվճար տրամադրվում է միայն ստոմատոլոգիական վիրաբուժական բժշկական օգնություն, իսկ թերապևտիկ և օրթոպեդիկ ծառայությունները՝ համավճարային սկզբունքով: